«Շիրակի ուսուցիչների միություն» գիտական կենտրոն ՀԿ

Վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Կերպարվեստի դասավանդման առանձնահատկությունները

Առարկա- կերպարվեստ

Դպրոց՝ Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց

Ուսուցիչ ՝ Փուրթոյան Արմինե

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ առաջին- Կերպարվեստի դասավանդումը տարրական դասարաններում:----------5

Գլուխերկրորդ: Կերպարվեստի դասավանդման նպատակը և խնդիրները:-11

Եզրակացություն----------16

Օգտագործված գրականության ցանկ----------17

Ներածություն

Ժամանակակից հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր ուսումնական բնագավառում ուսումնական գործունեության տեսակները նախագծելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն տվյալ առարկայի գծով գիտելիքների հաղորդման, այլև սովորողի մեջ նշված հատկանիշների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, Կերպարվեստը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը: Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն իրականացնելը նպաստում է՝ -Իրականության գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը. -Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը.

-Անձի ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը. -Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը. -Ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Դասընթացն իրականացվում է երկու հիմնական բաժիններով՝ ստեղծագործական գործունեություն և արվեստի միջոցով իրականության ընկալում: Գեղարվեստական գործունեություն - գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն/դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ: Գաղափարների հավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների և միջոցների ուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ:

Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքների ուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում: Թեմատիկ պատկերում՝ իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներով սովորողների տպավորությունների իրատեսական, վերացական, երևակայական հաղորդումը:

Ստեղծագործական աշխատանքների վերանայում, ավարտ և ցուցադրություն: Արվեստի միջոցով իրականության ընկալում - ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննում, գնահատում և արժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրում: Արվեստագետների դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրում: Տեխնոլոգիական նորարարությունների դերը արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ: 2 Արվեստի ուսումնասիրումը և մյուս առարկայական բնագավառները: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ:

Կերպարվեստի ուսումնական գործունեությունը իրակացվում է խառը ուսուցման ձևաչափով ելնելով՝ թեմայի բովանդակությունից, Առաջարկվող գործունեության ձևերի բնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները՝ համադասարանական, անհատական, զույգերով և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, երաժշտական գործիքներով, տեխնիկապես հագեցած, արվեստի սենյակներում կամ դպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում, կարող են ընտրվել ուսումնական գործունեության այլընտրանքային տեսակներ:

Գլուխ առաջին: Կերպարվեստի դասավանդումը տարրական դասարաններում:

Տարրական դասարններում կերպարվեստ առարկայի բովանդակությունն է կազմում ստեղծագործական գործունեության մի քանի տեսակներ: Նկարչական գործունեություն: Բնօրինակից, հիշողությամբ և երևակայությամբ նկարչություն:, բնական դիտումների վրա հիմնված նկարչություն: Գործունեության այս տեսակը նախատեսում է խաղալիքների և այլ ոչ բարդ օբյեկտների պատկերում հիշողությամբ և բնօրինակից՝ ժողովրդական հեքիաթների թեմաներով, շրջապատող կյանքի պատկերում, որն իրականացվում է նախնական դիտարկումներով և երևակայությամբ: Գեղարվեստական գործունեություն - գծանկար, գունանկար, ծեփ, հորինվածք, տպագրություն/դաջվածք, դեկորատիվ գործունեություն, ավարտուն աշխատանքներ և ցուցադրություններ: Գաղափարներիհավաքագրում, ստեղծագործական աշխատանքների կատարման պայմանների, մոտեցումների ևմիջոցներիուսումնասիրություն, անհրաժեշտ նյութեր և գործիքներ: Կերպարվեստի տարրերի և դիզայնի սկզբունքներիուսումնասիրություն, բնօրինակից, հիշողությամբ կամ երևակայությամբ տարբեր առարկաների պատկերում: Թեմատիկ պատկերում՝ իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային թեմաներով սովորողներիտպավորությունների իրատեսական, վերացական, երևակայական հաղորդումը: Ստեղծագործականաշխատանքների վերանայում, ավարտ և ցուցադրություն: Արվեստի միջոցով իրականությանընկալում- ստեղծագործական աշխատանքների մեկնաբանություն, վերլուծություն, քննում, գնահատում ևարժևորում: Արվեստի ստեղծագործությունների նշանակության, նպատակների, իմաստի ուսումնասիրում: Արվեստագետների դերը հասարակության մեջ: Տարբեր ժամանակաշրջանների արվեստի տեսակների, ժանրերի, ձևերի, ոճերի և ուղղությունների ուսումնասիրում:

Տեխնոլոգիական նորարարությունների դերը արվեստի բնագավառում: Արվեստագիտական տարբեր մասնագիտություններ: Արվեստի կապը գիտության մյուս ճյուղերի հետ: Ուսումնական գործունեության տեսակներ Կերպարվեստի ուսումնական գործունեությունը իրակացվումէխառը ուսուցման ձևաչափով ելնելով՝

թեմայի բովանդակությունից, Առաջարկվող գործունեությանձևերիբնույթից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, ուսումնասիրվող նյութի, քննարկվող հիմնախնդրիառանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից: Առաջարկվում է կիրառել դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները՝ համադասարանական, անհատական, զույգերովևփոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսուցումն իրականացվելու է համապատասխան նկարակալներով, դազգահներով, երաժշտական գործիքներով, տեխնիկապես հագեցած, արվեստի սենյակներումկամդպրոցական արվեստանոցներում: Ուսումնական գործընթացում, կարող են ընտրվել ուսումնականգործունեության այլընտրանքային տեսակներ:

Ծեփակերտում պլաստիլինով և կավով: Այս պարապմունքների ժամանակ աշակերտները ծանոթանում են առարկաների ծավալային ձևերին, սովորում են տոսնոկ առարկայի կառուցվածքը և համամասնությունները: Ծեփակերտումը նպաստում է երեխաների տարածական մտածողության զարգացմանը, նրանց մոտ ձևավորում գեղարվեստկան ընդհանրացման կարողություններ, զարգացնում է աշխատանքային հմտությունները: Այս պարապմունքների ժամանակ սովորողները բնօրինակից և երևակյությամբ ծեփում են թռչուններ, կենդանիներ, զանազան խաղալիքներ և ոչ բարդ տարածական կոմպոզիցիաներ: Ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման համար ուսումնական ծրագրերում պետք է արտացոլվեն պարապմունքների չորս հիմնական տեսակներ՝ բնօրինակից նկարչություն(գծանկար, գունանկար), թեմատիկ նկարչություն, զարդակիրառական աշխատանք, զրույցներ կերպարվեստի և շրջապատող գեղեցկության մասին: Պարապմունքների հիմնական տեսակները պետք է լինեն միմյանց հետ սերտորեն փոխկապակցված և լրացնեն միմյանց: Անցկացվեն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ՝ հիմնված լինելով աշակերտների հետաքրքրությունների վրա, հաշվի առնելով տարվա եղանակյին առանձնահատկությունները, նշանավոր տարելիցները և այլն: Դասերի բոլոր թեմաները ենթարկվում են գեղագիտական, աշխատանքային, բարոյական դաստիարակության խնդիրներին: Նրանցում հաշվի են առնվում աշակերտների հետաքրքրությունները և տարիքային առանձնահատկությունները: 1-4

դասրաններում կերպարվեստի դասվանդման հիմնական նպատակն է սովորողներին ծանոթացնել հարթապատկերային ձևերին, գույների համադրությանը, տարբեր նյութերով աշխատելու կարևորության և հմտության զարգացմանը, բնական և ոճավորված ձևերի բնորոշ հատկությունների տարբերակմանը: Առաջին դասրանից երեխաները սովորում են որոշել և անվանել նկարելու համար ընտրված առարկաները, նրանց գույները, ծանոթանում են տաք և սառը գույների, ինչպես նաև գուներանգներին: Հաջորդ դասարաններում ևս ուսուցիչը շարունակում է զարգանել գունային ներդաշնակ զուգակցումներ ստեղծելու կարողությունները: Գեղանկարչության պարապմունքներն աշակերտներին օգնում են զգալ շրջապատող աշխարհի ամբողջ գունային հմայքը, հարստացնում են նրանց հոգեպես, զարգացնում գեղագիտական ճաշակը: Բնօրինակից նկարչություն: (գծանկար, գունանկար, ծեփ): Բնօրինակից պատկերման առաջադրանքները լինում են երկարատև(1-2 դաս) և կարճատև (ճեպանկարներ և ուրվանկարներ), որոնք կատարվում են 715 րոպեի ընթացքում: Ճեպանկարներն ու ուրվանկարները կատարվում են դասի սկզբում, միջնամասում կամ վերջում (կախված դասի պահանջներից): Սովորողների տեսողական հիշողության, տարածական պատկերացման զարգացման համար պետք է հնարավորին չափ հաճախ հանձնարարել հիշողությամբ և պատկերացմամաբ նկարելու առաջադրանքներ: Բնօրինակից նկարելու գործընթացում առարկաները դրվում են դիմային դիրքով: Այս պարապմունքների ընթացքում խրախուսվում է երեխաների ինքնուրույնությունը, որը նկատվում է ծավալների բացահայտման ժամանակ, ինչպես նաև պատկերի ճիշտ արտահայտչականության մեջ: Կարևոր է գտնել ճիշտ մոտեցումները: Թեմատիկ նկարչություն Ուսուցման ընթացքում աշակերտների կերպարվեստային գործունեությունը ընդգրկում է շրջապատող իրականության պատկերումը, ինչպես և գրական ստեղծագործությունների նկարազարդումը: Աշխատանքները կատարվում են հիշողությամբ՝ նախապես նպատակաուղղված դիտումներիի, երևակայության հիման վրա: Դրանք ուղեկցվում են բնօրինակից ճեպանկարների և ուրվապատկերների կատարմամբ: Թեմատիկ նկարներ կատարելիս կատարելագործվում և ամրապնդվում են առարկաների համաչափությեւնների, կառուցվածքի, ծավալի, տարածական դիրքի, լուսավորվածության, գույնի գրագետ պատկերման ունակությունները: Կարևոր

նշանակություն են ստանում արտահայտիչ նկարելու, կերպարվեստի ճանաչողագեղագիտական էությունը երեխաներին հասցնելու խնդիրները: Ուսումնաստեղծագործական առաջադրանքների համակարգը լրացվում է,որպես երեխաների բարոյական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց ժողովրդական զարդակիրառական արվեստի ուսուցման բաժնով: Կերպարվեստի դասրի գործնական ուղղվածության, առօրյա կյանքի հետ նրա կապի ամրապնդման առնչությամբ, դասընթացի մեջ առանձնակի տեղ է հատկացվում միջառարկայան կապերին(մայրենի լեզվի, գրականության, երաժշտության, աշխատանքի ուսուցման, կենսաբանության, գծագրության, պատմության):Թեմատիկ աշխատանքների կազմակերպումը պետք է բխի նաև դպրոցականների ստեղծագործական գործունեության համակարգվածության և հաջորդականության կիրառման առանձնահատկություններից: Ընդհանուր առմամբ, թեմատիկ նկարչության դասավանդման արդյունավտության չափանիշներն են՝ իրականության գեղագիտական ընկալումը, շրջապատի, առարկաների և բնության գեղեցկությանը հուզական արձագանքումը և, ի վերջո, ձևավորվող անձնավորության ստեղծագործական ունակությունների հայտնաբերումը և զարգացումը: Զարդակիրառական աշխատանք Ուսուցումն իրականացվում է ստեղծագործական զարդակիրառական հորին-վածքներ, ձևավորման նախանկարներ կատարելու ընթացքում(հնարավոր են օրինակների հիման վրա վարժությունների կատարումներ): Սովորողները ծանոթանում են ժողովրդական զարդակիրառական արվեստի ստեղծագործություններին: Աշխատանքները կատարվում են բնական տերևների, ծաղիկների, թիթեռների, բզեզների և այլ ձևերի ու գույների զարդարարական ոճավորման հիման վրա: Երեխաները ստեղծագործում են՝ կիրառելով ժողովրդական զարդանախշի պարզագույն ձևերը: Աշխատանքի ընթացքում բացահայտվում է ժողովրդական արվեստի նշանակությունը՝ որպես գեղագիտական, աշխատանքային և հայրենասիրական դաստիարակության արդյունավետ միջոցի: Զարդակիրառական արվեստի ստեղծագործությունների միջոցով աշակերտները գաղափար են կզամում գեղեցիկի, բարու՝ ժողովրդի ունեցած պատկերացումների ու ավանդույթների մասին: Զարդարարական աշխատանքի պարապմունքների ժամանակ գունային հարաբերությունների ներդաշնակության,

ձևի և գույնի տեսողական հավասարակշռության հասկացությունները կիրառվում են աշխատանքային ուսուցման դասերին՝ գույնզգույն թղթերից կտրված հարթապատկերում, խաղալիքներ պատրաստելիս, ասեղնագործության մեջ և այլն: Գեղեցիկն իրականության մեջ տեսնելու և նկարում վերարտադրելու կարողությունների մշակման, ստեղծագործական գործունեության նկատմամբ աշակերտների հետաքրքրության ձևավորման համար մեծ նշանակություն ունի կյանքի տարբեր կողմերն արտացոլող (բնություն, կենցաղ, ուսումնական աշխատանք, տեխնիկա, սպորտ և այլն) ձևանմուշների, հորինվածքների և առաջադրանքների թեմաների ընտրությունը:Ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում հարկավոր է ընդհանրական օգտագործել ազգային արվեստի հնարավորությունները՝ ազգային խորհրդանիշը, տարազները , եռագույն ազգային դրոշը, ժողովրդական և կրոնական ծիսակատարությունները: Զրույցներ կերպարվեստի և մեզ շրջապատող գեղեցկության մասին Պարապմունքները սեր և հետաքրքրություն են առաջացնում կերպարվեստի նկատմամբ, ընդլայնում աշակերտների պատկերացումները շրջապատող աշխարհի մասին: Ստեղծագործությունների վերատպությունների ցուցադրման ժամանակ անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնելէ հասկանալու նկարների բովանդակությունը, գեղարվեստական տարաբնույթ արտահայտչաձևը(գիծ Զրույցների բովանդակությունը պետք է նպաստի դպրոցականների մեջ հայրենասիրական ավանդույթների նկատմամբ հավատարմություն, ազգային պատմական հուշարձանների և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործությունների պահպանման վերաբերմունքի ձևավորմանը: Պարապմուքների նպատակայնությունը, հետաքրքրությունը անշուշտ կմեծանան, եթե դրանք ընթանան ուսուցման տեխնիկական միջոցների, համապատասխան լավ ընտրված տեսանյութերի, շարժանկարների օգտագործմամբ: Հնարավորության դեպքում կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, պատկերասրահներ, արվեստի հուշարձաններ: Շատ կարևոր է, որպեսզի աշակերտները մոտիկից ճանաչեն և լավ իմանան հայրենական արվեստի, սեփական երկրի ժողովրդական ստեղծագործությունների, դրանց հատկանշական առանձնահատկությունների մասին: Հպարտանան, ոգևորվեն և ոգշնչվեն դրանցով: 1-4 դասարանների

կերպարվեստի ստեղծագործությունների հետ ծանոթացումը կատարվում է դասի սկզբում կամ վերջում՝ 8-10 րոպեից ոչ ավելի: Մեկ զրույցի ժամանակ , որպես կանոն , ցուցադրվում են 2-3 ստեղծագործությունների վերատպություններ: Կերպարվեստի և հարակից առարկաների կապերի իրականացման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն այն ուսումնական նյութերը, որոնք տվյալդասարանում ուսուցանվում են, այլև այնպիսի նյութեր ու նմուշներ, որոնք աշակերտների կողմից կատարվել են ավելի վաղ կամ նույնիսկ նախորդ դասարաններում: Դա ավելի է ամրապնդում նրանց պատկերացումները, համոզմունքները, զգացողությունները, հետաքրքրությունները: Ընդհանուր բնութագրական առումով այս պարապմունքները պետք է ընդգծվեն ճանաչողական բարձր մակարդակով և հուզականությամբ: Յուրաքանչյուր դաս աշակերտներին գեղեցիկի զգացողության, բարության, հայրենասիրության նոր լիցքեր պետք է հաղորդի:, գույն, հորինվածք և այլն):

Գլուխ երկրորդ: Կերպարվեստի դասավանդման նպատակը և խնդիրները:

Կերպարվեստը, որպես հանրակրթական դպրոցի ուսումնական առարկաներից մեկը, իր ուրույն տեղն ունի սովորողների դաստիարակության և ուսուցման գործընթացում: Ուսումնական ծրագրի հետ համապատասխան կերպարվեստը որոշակի խնդիրներ է առաջադրում.

1. Ակտիվորեն ներգործել բազմակողմանի, ներդաշնակորեն զարգացած և կրթված հասարակության անդամների ձևավորման, երեխաներին օգնել ճանաչել շրջապատող աշխարհը: Զարգացնել դիտողականությունը, տրամաբանորեն մտածելու կարողությունը, տեսածի գիտակցումը: Զարգացնել տարածական մտածողությունը, պատկերացումները:

2. Տալ սովորողներին ռեալիստական նկարի հիմունքների տարրական գիտելիքներ, ձևավորել բնօրինակից, հիշողությամբ, պատկերացմամբ նկարելու հմտություններ, ծանոթացնել դեկորատիվ կիրառական արվեստի ոլորտում աշխատանքի առանձնահատկությունների հետ, երեխաների մոտ զարգացնել կերպարվեստային ընդունակություններ, ստեղծագործական երևակայություն:

3. Նպաստել սովորողների գեղագիտական դաստիարակությանը: Զարգացնել երեխաների ստեղծագործակամ ընդունակությունները, դաստիարակել գեղարվեստական ճաշակ: Երեխաների մոտ զարգացնել գեղագիտական զգացմունքներ և գեղեցիկի հասկացում, դաստիարակել հետաքրքրություն և սեր արվեստի հանդեպ:

4. Կերպարվեստի ուսուցման ժամանակակից փուլի կարևորագույն խնդիրը սովորողների ազատ մտածելու, ստեղծագործելու կարողությունների մշակումն ու զարգացումն է: Դիտարկենք այս խնդիրները առավել մանրամասները Կերպարվեստի դասավանդումը միջնակարգ դպրոցում ամենից առաջ հանրակրթական նպատակներ է հետապնդում: Հիմնական խնդիրը սովորողների ընդհանուր աշխարհայացքը ընդլայնելն է , նպաստել բազմակողմանի զարգացած անհատականության դասատիարակմանը, կանոնավոր կերպով բարձրացնել սովորողների կրթվածության աստիճանը: Դպրոցում կերպարվեստի դասերը մեծ

հնարավորություն են ստեղծում անհատի զարգացման համար: Նկարչությունը նպաստում է՝սովորողների բազմակի զարգացմանը՝ այն զարգացնում է և' մտավորը, և'գեղագիտականը: Նկարչությունը օգնում է ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնում է տեսողական հիշողությունը, տարածական մտածողությունը և պատկերացումները: Այն մարզում է աչքաչափը և սովորեցնում է ճանաչել բնության գեղեցկությունը, սովորեցնում մտածել և զգալ: Նկարելիս երեխաները առավել խորն են ճանաչում շրջապատող աշխարհը: Նրանք ուշադրությամբ ուսումնասիրում են առարկաների ձևերը, դրանց կառուցվածքը, համաչափությունները, դիրքը տարածության մեջ, գունային հարաբերակցությունները և դրանով հանդերձ վարժվում են դրանց առավել արդյունավետ, բազմակողմանի, խորացված և հստակ ընկալմանը: Տեսողական ընկալման զարգացման ներքո հասկանում ենք երեխաների մոտ նպատակաուղղված դիտելու, երևույթները և առարկաները իրար հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու, առարկաները ըստ ձևի դասակարգելու կարողությունների դաստիարակումը: Նկարչությունը զարգացնում է երեխաների ստեղծագործական մտածողությունը, խորացնում և ընդհանրացնում է շրջապատող իրականության մասին նրանց պատկերացումները: Փորձը ցույց է տվել, որ այն դպրոցները, որտեղ լավ հիմքերի վրա է դրված նկարչության դասվանդումը, այնպիսի շրջանավարտներ են ունենում, որոնք կարողանում են ցանկացած ոլորտում իրենց կարողությունները և գիտելիքները կիրառել: Ուսուցիչը պետք է ցույց տա երեխաներին հայրենի բնության գեղեցկությունը, տեղանքին հատուկ ձևերի բազմազանությունը և գույները: Բնապատկեր նկարելիս երեխաները ուսումնասիրում են շրջակա բնությունը՝ ծառերի տեսակները, ծաղիկները, լեռները, շրջապատող աշխարհի զանազան ձևերը: Կերպարվեստի պարապմունքները դպրոցում խնդիր է առաջադրում երեխաների մեջ զրգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են կազմակերպվածությունը աշխատանքում, գիտակցաբար և ըստ պլանի աշխատելու կարողությունը: Նկարի կատարման գործընթացը նպատակաուղղված աշխատանք է հանդիսանում: Նկարելիս աշակերտը իր առջև որոշակի նպատակ է ունենում և ձգտում է հասնել դրան: Նա ձգտում է հաղթահարել աշխատանքի ընթացքում առաջացող դժվարությունները և հասնել հաջողության: Որոշակի նպատակի հասնելու համար սեփական ուժերը

կենտրոնացնելու կարողությունը հսկայական նշանակություն ունի մարդու համար, հետագա ամբողջ կյանքում: Կերպարվեստի պարապմունքները սովորողների առջև պլանաչափ աշխատելու մշտական պահանջ է դնում (նկատի ունենք պատկերի կատարման մեթոդական հաջորդականությունը): Աշխատանքում գիտակցականության և հաջորդականության պահանջը օգտակար աշխատանքային ունակություններ է մշակում: Այս որակները անհրաժեշտ է ընդգծել, քանի որ մանկավարժության մեջ դրանք հսկայական դեր են խաղում: Միջնակարգ դպրոցում կերպարվեստի ուսուցման կարևորագույն խնդիրն է հանդիսանում ռեալիստական նկարի հիմունքների բացահայտումը, երեխաներին նկարչության հիմնական եղանակների ուսուցանումը, տարրական գիտելիքներով զինումը: Երեխաները պետք է իմանան, թե ինչպես ճիշտ օգտագործեն նկարչական նյութերը, ինչպես աշխատեն նկարի վրա՝ պահպանելով մեթոդական հաջորդականությունը աշխատանքում: Պետք չէ մտածել,որ միջնակարգ հանրակրթական դպրոցում նկարչության տեխնիկական եղանակների ուսուցումը անհրաժեշտ չէ: Երեխան միայն դպրոցում կարող է ծանոթանալ նկարչության հիմնական եղանակների հետ: Ուսուցիչը պարտավոր է ցույց տալ, թե ինչպես պետք է մատիտը ձեռքում ճիշտ պահել, ինչպես գիծ քաշել, թե ինչպես դրանցով արտահայտել ծավալային ձևը հարթության վրա: Սովորողները պետք է պատկերացում ունենա գծային և տոնային նկարի մասին, սովորեն աշխատել վրձնով և ներկերով, իմանան գունախառնուրդների ճանապարհով անհրաժեշտ երանգները ստանալու ձևերը:Կերպարվեստի դասերի ընթացքում երեխաների ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները լայն կիրառություն են ունենում ինչպես այլ դասերի ընթացքում, այնպես էլ հետագա ամբողջ կյանքում՝ աշխատանքային գործունեության ժամանակ: Նկարելու կարողությունը, զնանազան օբյեկտները հստակ պատկերացնելու ընդունակությունը անհրաժեշտ է շատ մասնագիտություններում: Դպրոցում կերպարվեստ առարկայի խնդիրն է հանդիսանում սովորողների գեղագիտական դաստիարակությունը

Գեղագիտական դաստիարակության էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մքրդ սովորի ապրել գեղեցիկ, հետաքրքիր, սովորի տեսնել, զգալ ր հասկանալ գեղեցիկը իր ցանկացած արտահայտման մեջ: Գեղագիտական դաստիարակությունը դա արվեստում , բնության և հասարակության մեջ գեղեցիկի

ճիշտ հասկացման և լիարժեք ընկալման ընդունակության դաստիարակումն է սովորողների մոտ: Երեխաների մոտ գեղագիտական ճաշակ ձևավորելու համար, մանկավարժը պետք է ամենից առաջ աշակերտների ուշադրությունը կենտրոնացնի գեղեցիկի վրա՝ շրջապատող իրականության մեջ: Սովորեցնի զգալ, ընկալել գեղեցիկը, հիանալ, ուրախանալ նրանով: Ճաշակը մարդու բնածին որակ չէ, և այն զարգացնելը դպրոցում առաջին հերթին նկարչության ուսուցչի պարտականությունն է: Նա պետք է երեխաներին սովորեցնի տեսնել և զգալ գույնի, գծերի, ձևերի ներդաշնակությունը: Կերպարվեստի դասավանդումը նոր մեթոդի կիրառմամբ Դպրոցում կերպարվեստի դասերը մեծ հնարավորություն են ստեղծում անհատի զարգացման համար: Նկարչությունը նպաստում է՝սովորողների բազմակի զարգացմանը՝ այն զարգացնում է և' մտավորը, և'գեղագիտականը: Նկարչությունը օգնում է ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնում է տեսողական հիշողությունը, տարածական մտածողությունը և պատկերացումները: Այն մարզում է աչքաչափը և սովորեցնում է ճանաչել բնության գեղեցկությունը, սովորեցնում մտածել և զգալ: Ընդհանուր բնութագրական առումով այս պարապմունքները պետք է ընդգծվեն ճանաչողական բարձր մակարդակով և հուզականությամբ: Յուրաքանչյուր դաս աշակերտներին գեղեցիկի զգացողության, բարության, հայրենասիրության նոր լիցքեր պետք է հաղորդի: Աշխատանք փոքր խմբերով Ուսուցման ձև է,որը սովորողներին հնարավորություն է տալիս դասընկերների հետփոխանակելիրենցգիտելիքներն ու փորձը, համատեղ լուծել խնդիրներ: Մեթոդի կիրառման ժամանակ սովորողներըգիտակցաբար և ակտիվ համագործակցության մեջ են մտնում, քանի որ ունեն ընդհանուր մինպատակ: Աշխատանք զույգերով, ենթախմբերով Երեխայակենտրոն ուսուցումն ապահովելու նուսուցմանարդյունավետությունը բարձրացնելու նպատակով շատ կարևոր է զույգերով և ենթախմբերովհամագործակցային աշխատանքների կազմակերպումը: Այն երեխաներին հնարավորություն է տալիս համագործակցել, փոխանակել միմյանց հետ իրենց գիտելիքներն ու փորձը, սովորել միմյանցից, ձգտել հասնելու ընդհանուրնպատակին: Երեխաները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամներիներդրումից: Նման խմբերին բնորոշ են թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնն

անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալականփոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելուուվերանայելու կարողությունը: Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները. 1. զարգացնումէխնդիրներ լուծելու կարողությունը, 2. ձևավորում է հաղորդակցման հմտություն, 3. երեխաները սովորումենմիմյանցից, 4. զարգանում է երեխայի պատասխանատվության զգացումը, 5. խթանում էթիմայինաշխատանքը,

6. ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտություններըդրսևորելու համար,

7. ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն: Իմ աշխատանքային պրակտիկայում առաջին անգամ տարրական դպրոցի 2րդ դասարանում կատարել եմ խմբային աշխատանք՝ թեմայով: Երեխաներն այդ աշխատանքը կատարել են 3 տարբեր նյութերով՝ 1ին խումբ(գունանկար), 2-րդ խումբ(պլաստիլինով), 3-րդ խումբ(գունավոր թղթերով): Երեխաների մոտ բավականին լավ ստացվեց թիմային աշխատանքը: Այն երեխաներինհնարավորություն տվեց համագործակցել, փոխանակել միմյանց հետ իրենց գիտելիքներն ու փորձը, սովորելմիմյանցից, ձգտել հասնելու ընդհանուր նպատակին: Երեխաները հասկացան, որ իրենց հաջողությունըկախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքս կատարելիս եկել եմ եզրահանգման, որ առարկայի դասաժամերին նոր մեթոդների կիրառումը նպաստում է դասապրոցեսին աշակերտների ակտիվության բարձրացմանը, ձևավորում է խմբում աշխատանք կատարելու ընդունակությունները, ձևավորվում և զարգանում է աշակերտների խոսքի `կարծիք արտահայտելու, վերլուծելու, քննարկելու,մեկնաբանելու կարողությունները և հմտությունները: Յուրաքանչյուր մեթոդ ուղղված է կոնկրետ առաջադրանքի լուծմանը, իրավիճակի բացահայտմանը, այսինքն՝ մանկավարժը մեթոդները ընտրում և կիրառում է՝ կախված իրավիճակից, կարևորվում է իրավիճակային մոտեցումը, նաև աշակերտի տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները: Հետազոտական աշխատանք կատարելիս եկել եմ հետևյալ եզրահանգման Գեղագիտական ճաշակը ձավորվում է արվեստի ստեղծագործությունների հետ շփան միջոցով, որոնք արթնացնում են մարդու մոտ գեղագիտական ընկալման կարողություն և հմտություն: Հանրակրթական ուսումնական հաստատություններում կերպարվեստի դասաժամերը պետք է անցկացնել մանկավարժական բոլոր պահանջներին համապատասխան: Այդ դասաժամերը պետք է լինեն առավելագույնս արդյունավետ և նպաստեն սովորողի `որպես ապագա արվեստագետի ձևավորմանը: Արվեստը օգնում է դաստիարակել բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ: Նպաստում է աշխարհընկալամ ձևավորմանը:

Նկարիչմանկավարժը պետք է լավ տիրապետի իր մասնագիտկան տեսական և գործնական կողմերին:

Գրականության ցանկ

1..Կերպարվեստը դպրոցում. Շաբաթ. նյութեր և փաստաթղթեր / կազմ. Գ.Գ.Վինոգրադովա: Մանկավարժական կրթություն, 1990 թ. (Շարք «Կերպարվեստի ուսուցչի գրադարան»):

2.Մ. Գ. Երզնկյան, Ա. Բաղդասարյան, Կերպարվեստի բառագիրք, Երևան 2002թ.

3. Լ. Ս. Ներսիսյան , Կերպարվեստ և գեղարվեստական աշխատանք, Երևան 2004 թ.

4. Ա. Հ. Հակոբյան, Երևան 2006թ.

5.Լ.Ս. Ներսիսյան Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մեջ, ,Երևան 2002թ.

6. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն, Երևան 2005թ.

7.https://escs.am/files/files/2020-07-15/abb6c78e3b3b8b5f8ca3922b1e161f7a.pdf